պատմուածքն էլ յիշեցնում է սորա և Արայի աւանդութիւնը[1]։

Բոլորովին նոր են. առաջին Խոսրով թագաւոր,—որ ցարդ ոչ մի փոփոխակ չունի,—որի հօրը Մսրամելիքին Դաւիթն սպանելուց յետոյ՝ նորան թագաւոր է անում (№ 14, § 104)։ Այս Խոսրովի դէպքն անշուշտ յուշիկ է Սասանեան Խոսրով Նուշիրուանի, Խոսրով Պարուէզի և Ֆերբուխ կամ Խորբեզադ Խոսրովի պատմական անցքերի, որոնց մէջ հայերը և յատկապէս Մամիկոնեանք դեր են խաղացել. այսպէս ըստ Սեբէոսի և Յովհան Մամիկոնեանի մի Մամիկոնեան Մուշեղ[2] Խոսրով Ապրուէզի կուսակից է, իսկ մի ուրիշը՝ Դաւթի որդի Մուշեղը մասնակցել է Հերթիջանի (=Կադիսի ջայի) կռուին 636/37 թուականին[3], թերևս սա կամ իւր հայրը, Դաւիթ, օգնել են և վերջին Խոսրովին դահ բարձրանալու։

Երկրորդ հետաքրքրական է շատ այստեղ Պարան Պոշ կամ Պոժ և Պարան Բուէք ֆրանսայ դիւցազների իբրև «դևերի» հանդէս գալը (№ 14, § 116—118, 120)։ Դև, ֆէրզ, փահլևան, ինչպէս Քաջանց վէպի ուսումնասիրութեան մէջ ցոյց եմ տուել հոմանիշ բառեր են և նշանակում են քաջեր, դիւցազներ։ Պոշը՝ տարակոյս չկայ, մեր պատմութեան մէջ ԺԳ. դարում յայտնի հայ իշխանն է, որ Պարան այսինքն պարոն է կոչւում։ Պոշը յայտնի է ոչ միայն Հիւսիսային Հայաստանում այլ և հարաւում. Բաղէշում ցարդ կայ Պոշեան մի ազգատոհմ, ինչպէս ինձ պատմել է հանդուցեալ Պերճ Պոշեանը։ Իսկ Բաղէշի Խիզան կամ Հիզան գաւառի Շէնաձոր գաւառակում կայ մի գիւղ «Պրոշէնց» անունով[4]։ Յայտնի է և Պոշ թագաւորի հրաշագործ թրի աւանդութիւնը կապուած Խաչլուայ[5] լճի հետ. մի թուր, որ յիշեցնում է նախ Քէօռ-օղլու Զլֆկար թրի պատմութիւնը և ապա Թուր Կեծակին, որ Հալլունի թուրն է։

Այս առթիւ հարկ եմ համարում յայտնելու, որ ես Զոջանց վէպի մէջ պատմականը փնտռելով և ի նկատի առնելով, որ Խանդուտ Խաթունին ուղղ և Դաւթի հետ կռուող դիւցազների մէջ միայն օտար անուններ կային, ես Համզան օտար համանուն

---

1. Զոջանց տան Պատմականը. էջ 25։

2. Արարատ 1906. Դեկտեմբեր. էջ 872—875 եւ ծանօթութիւն.։

3. Սէբէոս. Պատմ. Դ. Լ. էջ 107. Ս. Պետերբ. 1879։

4. Ս. Էփրիկեան. Բնաշխարհիկ բառարան. Բ. խիզան. էջ 174. Վենետիկ 1907։

5. Անդ. «Խաչլուայ լճակ»-ի տակ մէջ է բերուած ամբողջ հետաքրքրական աւանդութիւնը։ Այստեղ Թուրը շինելու աւանդութիւնը միեւնոյնն է, ինչ որ Քէօռ-Օղլու Զլֆկարինը։